Կ. Բ. ՈՒԴՈՒՄՅԱՆ

ՌՍԴԲԿ(Բ) ԿՈՎԿԱՍՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿՐԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

1917 թ. հոկտեմբերին հեղափոխական ալիքը երկրում հասնում է իր զարգացման գագաթնակետին։ Սոցիալիստական հեղափոխության քաղաքական բանակի ձևավորման պրոցեսը հիմնականում ավարտվում է։ Բոլշևիկյան կուսակցությունը սոցիալիստական հեղափոխությունը նախապատրաստում էր ամբողջ երկրում։ Պատրաստվելով դինված ապստամբության, Պետրոգրադում, կուսակցության Կենտկոմը խոշոր նշանակություն է տալիս նրա կազմակերպմանը տեղերում։

1917 թ. հոկտեմբերի 2—7-ը Թիֆլիսում բոլշևիկների կուսակցության Կենտկոմի ցուցումով տեղի է ունենում ՌՍԴԲԿ(Բ) կովկասյան կազմակերպությունների երկրային առաջին համագումարը, որի հրավիրման անհրաժեշտությունը հասունացել էր վաղուց։ Փետրվարյան հեղափոխության հաղթանակից հետո երկար ժամանակ փաստորեն չկար ընդհանուր կուսակցական կենտրոն, որը համախմբեր և ուղղություն տար երկրամասի բոլշևիկյան կազմակերպություններին։ Դա բացասաբար էր անդրադառնում Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների աշխատանքի վրա։ Երկրային համագումարի հրավիրման կապակցությամբ հրապարակած դիմումի մեջ համագումարի կազմակերպական բյուրոն նշում էր. «Մոմենտը լուրջ է և պատասխանատու. նա առաջադրել է մի շարք հարցեր, որոնք կարող են լուծվել միայն շրջանային կազմակերպությունների ընդհանուր ուժերով, նրանց հեղինակավոր ներկայացուցչության՝ շրջանային համագումարի միջոցով։ Անհերքելի փաստ է հանդիսանում մեր կազմակերպությունների օրավուր ուժեղանալն ու անդամների բազմանալն ամբողջ Կովկասում։ Եվ այդպիսի հանգամանքներում յուրաքանչյուր կազմակերպություն, յուրաքանչյուր խմբակ իր հայեցողությամբ լուծումն է տալիս ամբողջ շրջանի համար կարևոր նշանակություն ունեցող հարցերի։ Բացակայում է կուռ միությունը, փոխադարձ հարաբերությունը, անջատ գործունեությունը կործանարար հետևանք է ունենում։ Զղացվում է շրջանային կենտրոնի բացակայություն, կենտրոն, որը ղեկավարեր շրջանային ընդհանուր գործունեությունը»[1]։

Կուսակցության Կենտկոմի ցուցումով Կովկասի բոլշևիկյան կազմակերպությունները ձեռնամուխ եղան երկրամասային համագումար հրավիրելու և երկրամասային կուսակցական կազմակերպություն ձևավորելու աշխատանքներին։ ՌՍԴԲԿ(Բ) Բաքվի կազմակերպության կոնֆերանսում Ա. Ջափարիձեն նշեց «Կովկասյան մարզային կազմակերպություն ստեղծելու անհրաժեշտությունը, որի վրա իր ուշադրությունը հրավիրեց մեր վերջին կուսակցական համագումարը»[2]։ Կուսակցության կովկասյան կազմակերպությունների երկ-

---

1 «Բանվորի կոիվը», № 23, 1917։

2 «Բակինսկի ռաբոչի», № 54, 1917։

բային համագումարը հրավիրվեց ՌՍԴԲԿ(բ) Թիֆլիսի և Բաքվի կոմիտեների նախաձեռնությամբ։ Համագումարի գումարման նախապատրաստական աշխատանքը տանում էր Թիֆլիսի կոմիտեն, որը մինչև երկրային կոմիտեի ստեղծումը փաստորեն կատարում էր նրա ֆունկցիաները։ Օգոստոսի 22-ին բոլշևիկների Թիֆլիսի կոմիտեն Մ. Ցխակայայի նախագահությամբ և ՌՍԴԲԿ(բ) Բաքվի կոմիտեի ներկայացուցիչ Ա. Ջափարիձեի մասնակցությամբ որոշում է ընդունում սեպտեմբերի 15-ին Թիֆլիսում հրավիրել Կովկասի բոլշևիկյան կազմակերպությունների համագումար[3]։ Միաժամանակ հաստատվում է և համագումարի օրակարգը։ Սակայն համագումարը բացվեց միայն հոկտեմբերի 2-ին։ Հոկտեմբերի 1-ին տեղի է ունենում ՌՍԴԲԿ(բ) Թիֆլիսի կոմիտեի և համագումարում ներկայացված կուսակցական կազմակերպությունների ներկայացուցիչների խորհրդակցություն, որտեղ վերջնականապես ճշտվում է համագումարի օրակարգը և հաստատվում զեկուցողները[4]։ 1917 թվականի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին երկրային համագումարի նախապատրաստման ու հրավիրման կապակցությամբ Ալեքսանդրապոլի, Կարսի, Սարիղամիշի, Լոռու և Հայաստանի մյուս բոլշևիկյան կազմակերպություններում տեղի են ունենում կուսակցական կոնֆերանսներ։ Կովկասի բոլշևիկների առաջին համագումարն անցավ զինված ապստամբության կազմակերպման մասին կուսակցության 6-րդ համագումարի որոշումների և Կենտրոնական կոմիտեի դիրեկտիվների իրականացման նշանաբանով։ Համագումարը որոշեց Կովկասի բոլշևիկյան կազմակերպությունների գործնական, անհետաձգելի խնդիրները սոցիալիստական հեղափոխության հաղթանակի համար մղվող պայքարում։ Համագումարի աշխատանքներն անմիջականորեն ղեկավարում էր կուսակցության Կենտրոնական կոմիտեի անդամ Ստ. Շահումյանը, որը մասնակցել էր սեպտեմբերի 15-ին կայացած Կենտկոմի այն պատմական նիստին, որտեղ քննարկվել էին Վ. Ի. Լենինի նամակները («Բոլշևիկները պետք է վերցնեն իշխանությունը», «Մարքսիզմը և ապստամբությունը») զինված ապստամբություն կազմակերպելու մասին։ Համագումարի աշխատանքներին մասնակցում էին պատգամավորներ Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Հյուսիսային Կովկասի և կովկասյան բանակի բոլշևիկյան կազմակերպություններից, որոնց շարքերում հաշվվում էին կուսակցության 8636 անդամ[5]։ Համագումարը քննարկեց հետևյալ հարցերը. 1. Զեկուցում կուսակցական համագումարի և կուսակցական կենտրոնի մասին։ 2. Զեկուցում տեղերից։ 3. Ընթացիկ մոմենտը։ 4. Սահմանադիր ժողովը։ 5. Կազմակերպական հարցեր։ 6. Ազգային հարցը։ 7. Կուսակցական մամուլը։ 8. Ագրարային հարցը։ 9. Ընտրություններ։ 10. Տարբեր հարցեր[6]։

Համագումարի առաջին նիստում լսվում է կուսակցության VI համագումարի պատգամավոր Ս. Քալթառաձեի զեկուցումը VI համագումարի մասին։

ՌՍԴԲԿ(բ) Կովկասյան կազմակերպությունների երկրային առաջին համագումարը միահամուռ կերպով հավանություն է տալիս կուսակցության VI համագումարի որոշումներին և դրանց կենսագործումը համարում երկրա-

3 Տե՛ս «Կավկազսկի ռաբոչի», № 135, 1917։
4 Տե՛ս «Կավկազսկի ռաբոչի», № 163, 1917։
5 Տե՛ս «Բանվորի կոիվը», № 30, 1917։
6 Տե՛ս «Կավկազսկի ռաբոչի», № 157, 1917։

մասի կոմունիստների ամենահրատապ ու առաջնահերթ խնդիրը։ Ապա համագումարն անցնում է տեղերից զեկուցումների քննարկմանը։ Կուսակցության տեղական կազմակերպությունների ներկայացուցիչների ելույթները ակնառու կերպով ցույց են տալիս, որ մեծ չափով աճել է բոլշևիկյան կուսակցության ազդեցությունը բանվորական, գյուղացիական և զինվորական զանգվածների շրջանում։ «Ամբողջ իշխանությունը Սովետներին», «Խաղաղություն», «8-ժամյա բանվորական օր», «Բանվորական վերահսկողություն արտադրության նկատմամբ», «Ամբողջ հողի ազգայնացում և կալվածատիրական հողերի բռնագրավում»—այս և բոլշևիկների կուսակցության մյուս լոզունգները դառնում էին աշխատավոր զանգվածների սեփականությունը։

Տեղական կուսակցական կազմակերպությունների և նրանց կողմից աշխատավոր զանգվածների շրջանում տարվող հեղափոխական աշխատանքների մասին հաղորդումներով հանդես են գալիս ՌՍԴԲԿ(բ) Բաքվի, Ելիզավետպոլի (Կիրովաբադ), Թիֆլիսի, Բաթումի, Գուրիայի, Գորիի, Հաղպատի, Ղարսի, Սարիղամիշի, Տրապիզոնի, Տուապսեի, Եկատերինոդարի (Կրասնոդար), Կիսլովոդսկի, զինվորական մասերի և մյուս կազմակերպությունների պատգամավորները։ Նրանք համագումարում պատմում են, որ բոլշևիկյան կազմակերպությունները հաղթահարելով էսեռա-մենշևիկյան և բուրժուա-նացիոնալիստական կուսակցությունների կատաղի դիմադրությունը, աշխատավորներին ազատում են նրանց ազդեցությունից։ Սոցիալիստական հեղափոխության համար Անդրկովկասի աշխատավոր զանգվածների պայքարի ավանգարդում ընթանում էր Բաքվի պանծալի պրոլետարիատը։

Բաքվի կայազորի զինվորների և Կասպիական ռազմական նավատորմիկի նավաստիների շրջանում բոլշևիկյան ազդեցության աճի մասին է համագումարին հաղորդում ՌՍԴԲԿ(բ) Բաքվի կազմակերպության պատգամավոր Զնելաձեն[7]։

Ելիզավետպոլի կազմակերպության պատգամավոր Ա. Մռավյանը երկրային համագումարին հայտնում է հայ և ադրբեջանցի աշխատավոր գյուղացիության հեղափոխական ագրարային շարժումների ուժեղացման մասին[8]։

Թիֆլիսի, Բաթումի, Գորիի, Գուրիայի կազմակերպությունների պատգամավորները երկրային համագումարում խոսում են հեղափոխական այն խոշոր աշխատանքի մասին, որը կատարում էին Վրաստանի բոլշևիկները բանվորական, զինվորական և գյուղացիական զանգվածների շրջանում։

Աշխատավորները սեփական փորձով համոզվելով, նշում են նրանք, որ մենշևիկների ու էսեռների համաձայնողական քաղաքականությունը կապիտալիստների ու կալվածատերերի շահերի պաշտպանության քաղաքականություն է, հիասթափվում են նրանցից և իրենց հայացքը դարձնում դեպի բոլշևիկյան կուսակցությունը։ ՌՍԴԲԿ(բ) Թիֆլիսի կազմակերպության պատգամավոր Ա. Աթաբեկյանը համագումարում ունեցած իր ելույթում պատմում է, որ չնայած բոլշևիկների նկատմամբ հակահեղափոխության կողմից կիրառվող հալածանքներին ու ղրպարտությանը, օրեցօր աճում է նրանց ազդեցու-

7 Տե՛ս «Կավկազսկի սարոչիս», № 168, 1917։

8 Տե՛ս նույն տեղում։

թյուններ աշխատավորների շրջանում։ Այդ ավելի ակնառու է դարձել հատկապես կոռնիլովշչինայի ջախջախումից հետո, ասում է նա[9]։

Տուրիայի բոլշևիկյան կազմակերպության պատգամավորն իր ելույթում նշում է, որ նույնիսկ Արևմտյան Վրաստանում, մենշևիզմի այդ կենտրոնում, «վերջին ժամանակաշրջանում զանգվածները դժգոհ են մենշևիկներից և սկսում են թեքվել բոլշևիկների կողմը»[10]։

Հանդես գալով Թիֆլիսի բանվորների և զինվորների դեպուտատների սովետի բոլշևիկյան ֆրակցիայի անունից, Կուզնեցովը նշում է, որ «բանվորների և զինվորների տրամադրությունը փոխվում է մեր օգտին։ Մասսաների մեջ աճում է համակրանքը մեր կուսակցության նկատմամբ և մեզ անհրաժեշտ է ուժեղացնել հեղափոխական աշխատանքը, որպեսզի նվաճենք ղեկավար դիրք հեղափոխության օրգաններում՝ Սովետներում»[11]։

Հայաստանի բոլշևիկյան կազմակերպություններից համագումարում ներկայացված էին Հաղպատի և Ալավերդու, Ալեքսանդրապոլի (Լենինական), Կարսի, Սարիղամիշի կազմակերպությունները։ Համագումարում ունեցած իրենց ելույթներում Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների պատգամավորները պատմում են հայ աշխատավոր զանգվածների օրըստօրե ուժեղացող հեղափոխական պայքարի մասին։ Ա. Ի. Միկոյանը, որը համագումարի պատգամավոր էր ընտրված ՌՍԴԲԿ(բ) Հաղպատի և Ալավերդու կազմակերպությունից, համագումարում նշում է. «Ալավերդու գործարանի բանվորները, ինչպես և գյուղացիները դնում են մեր կուսակցության ետևից»[12]։ Խոսելով Լոռու գավառի աշխատավոր գյուղացիության դասակարգային սուր պայքարի մասին, Ա. Ի. Միկոյանն ասում է. «Այդ միակ գավառն է, որտեղ հայկական սակավահող և հող չունեցող գյուղացիությունը կազմակերպված է հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի դրոշի ներքո։ Դա բացատրվում է տեղական տնտեսական կյանքի պայմաններով, ուր դասակարգային պայքարը կիսապրոլետարական գյուղացիության և հողատիրական դասակարգի միջև հասել է բարձրագույն սրվածության և լարվածության»[13]։

Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունները պարզաբանում ու բացատրում էին հայ աշխատավորական զանգվածներին, որ հայ ժողովրդի սոցիալական ու ազգային ազատագրության միակ ճանապարհը սոցիալիստական հեղափոխությունն է, նրա համախմբումը ռուսական պրոլետարիատի և բոլշևիկյան կուսակցության շուրջը։ Ա. Ի. Միկոյանն իր ելույթում ասում է, որ Ալավերդու և Հաղպատի ինքնավարության տեղական օրգանների ընտրությունների ժամանակ բոլշևիկները հինգ անգամ ավելի շատ տեղեր են ստացել, քան դաշնակցականները։ ՌՍԴԲԿ(բ) Կարսի ու Սարիղամիշի կազմակերպությունների պատգամավորներ Սկարյուկինը և Կիասովը համագումարին հայտնում են զինվորների շրջանում տարվող հեղափոխական աշխատանքի և նրանց վրա բոլշևիկյան ազդեցության ուժեղացման մասին։ Էսեռները, որոնք մինչև կոռնիլովյան հակահեղափոխական դավադրության ջախջախումը զինվորների մեջ

9 Տե՛ս «Կավկազսկի ռաբոչիյ», № 169, 1917։
10 Տե՛ս «Կավկազսկի ռաբոչիյ», № 168, 1917։
11 Տե՛ս նույն տեղում, № 169, 1917։
12 Նույն տեղում։
13 Նույն տեղում, № 170, 1917։

օգտվում էին հեղինակությամբ, նշում է Սկարյուկինը, այժմ կորցրել են այն. «Ներկայումս զինվորների տրամադրությունը հօգուտ բոլշևիկների է»,— ասում է նա[14]։

Սոցիալիստական հեղափոխության համար ակտիվորեն պայքարում էին և Հյուսիսային Կովկասի բոլշևիկյան կազմակերպությունները։ Տուապսեի, Կիսլովոդսկի, Եկատերինոդարի բոլշևիկյան կազմակերպությունների պատգամավորները համագումարում վերլուծելով զանգվածների շրջանում տարվող հեղափոխական աշխատանքի վիճակը, նշում են, որ կոռնիլովշչինայի ջախջախումից հետո բոլշևիկյան կուսակցության ազդեցությունն աճել է հսկայական չափով։

Համագումարի պատգամավորները միաժամանակ նշում են այն լուրջ դժվարությունները, որոնք ստիպված էին հաղթահարել երկրամասի բոլշևիկյան կազմակերպությունները՝ սոցիալիստական հեղափոխության համար մղվող պայքարում։ Անդրկովկասի սոցիալ-քաղաքական ու տնտեսական զարգացման յուրահատկություններով պայմանավորված օբյեկտիվ դժվարություններին ավելանում էին բոլշևիկյան կազմակերպությունների դեմ հակահեղափոխական բլոկի վայրենի հալածանքները, հետապնդումները, և անամոթ զրպարտությունը, հեղափոխական աշխատանքի փորձ չունեցող կուսակցական-պրոպագանդիստական կադրերի պակասությունը և այլն։

ՌՍԴՐԿ(բ) Կովկասյան կազմակերպությունների երկրային համագումարում տեղերից եղած զեկուցումների քննարկումը, պարզելով տեղական կուսակցական կազմակերպությունների և նրանց կողմից աշխատավորների շրջանում տարվող հեղափոխական աշխատանքների վիճակը, ինչպես և բանվորական, զինվորական և գյուղացիական զանգվածների տրամադրությունները, կարևոր նշանակություն ունեցավ համագումարի կողմից ճիշտ որոշումներ ընդունելու համար, որոնք ուղղված էին զինված ապստամբության կազմակերպման նպատակին։

Ընթացիկ մոմենտի մասին, որը համագումարի կենտրոնական հարցն էր, զեկուցումով հանդես եկավ Ստեփան Շահումյանը։ Խոր վերլուծության ենթարկելով իրադարձությունների զարգացման ընթացքը Փետրվարյան հեղափոխության հաղթանակից հետո, նա տվեց երկրում ստեղծված քաղաքական իրադրության, տարբեր դասակարգերի ու կուսակցությունների նպատակների և տակտիկայի բնութագիրը, նշեց Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների խնդիրները պրոլետարիատի դիկտատուրայի նվաճման համար մղվող պայքարում։

Հիմնվելով կուսակցության VI համագումարում ընդունված տակտիկական գծի վրա, Ստ. Շահումյանը նշում է, որ բոլշևիկները իշխանություն չունեն, իսկ հեղափոխության համար անհրաժեշտ է այն։ Բաց է թողնված այն մոմենտը, երբ պրոլետարիատը և աշխատավոր գյուղացիությունը, սովետները կարող էին առանց դժվարության, խաղաղ ճանապարհով վերցնել իշխանությունը։ Հուլիսյան օրերից հետո, ասում է Ստ. Շահումյանը, բացառված է իշխանության խաղաղ նվաճումը. պրոլետարիատն այն կարող է ձեռք բերել միայն զինված ապստամբության միջոցով։ Ելնելով կուսակցության VI համագումարի որոշումներից, Ստ. Շահումյանը Կովկասի բոլշևիկյան կազ-

14 «Կավկազսկի ռաբոչի», № 170. 1917։

մակերպությունների առաջնահերթ խնդիրը համարեց՝ գլխավորել օրեցօր հասունացող սոցիալիստական հեղափոխությունը և ապահովել իշխանության գրավումը պրոլետարիատի կողմից։

«Հավատալով, որ բոլշևիկների ազդեցությունը ուժեղանում է շատ սովետներում, նույնիսկ գյուղացիությունն էլ բոլշևիկանում է, որ ուկրաինացիները և նույնիսկ մենշևիկների պատվար Անդրկովկասը արտահայտվում են կոալիցիայի դեմ,—ասում է Ստ. Շահումյանը,—վերջապես ամենուրեք ուժեղանում են ալեկոծումները, ագրարային գրավումները և այլն, մեր խնդիրն է գլխավորել հեղափոխությունը և իշխանությունը վերցնել մեր ձեռքը»[15]։ Միաժամանակ Շահումյանը նշում է, որ հակահեղափոխությունը ամեն կերպ փորձում է, ինչ գնով էլ լինի ամրապնդել իր խարխլված դիրքերը, երկրում հաստատել ռազմական դիկտատուրա։ Որպես օրվա հրատապ խնդիրներ Ստ. Շահումյանն առաջ է քաշում սովետների համառուսական համագումարի հրավիրումը, բոլշևիկների կողմից սովետների ղեկավարության նվաճումը, գյուղացիական և զինվորական զանգվածների շրջանում տարվող հեղափոխական աշխատանքի ուժեղացումը և նրանց սոցիալիստական հեղափոխության կողմը գրավելը և այլն։

Խորապես համոզված լինելով սոցիալիստական հեղափոխության անխուսափելիության մեջ և լցված անսահման հավատով դեպի նրա հաղթանակը, Ստ. Շահումյանը իր զեկուցումը վերջացնում է հետևյալ խոսքերով. «Չնայած այն ամբողջ պատասխանատվությանը, որ մենք վերցնում ենք մեզ վրա, չվախենալով աշխատանքի դժվարությունից ու բարդությունից՝ համարձակորեն ընդառաջ գնալ կյանքի առաջադրած խնդիրներին և, մեր ձեռքը վերցնելով իշխանությունը, հեղափոխությունը հասցնել մինչև հաղթական վերջը»[16]։

Ընթացիկ մոմենտի քննարկման ժամանակ համագումարի մի քանի պատգամավորներ օպորտունիստական դիրք են գրավում զինված ապստամբության նախապատրաստման հարցում։ Անտեսելով, որ երկրի սոցիալ-տնտեսական ու քաղաքական կյանքում տեղի են ունեցել արմատական տեղաշարժեր, որ մենշևիկների ու էսեռների համաձայնողական քաղաքականությունը վերաճել է բացահայտ հակահեղափոխական քաղաքականության, և որ այդ պայմաններում պրոլետարիատը իշխանությունը կարող է գրավել միայն զինված ապըստամբության միջոցով, նրանք շարունակում էին կառչած մնալ սովետների կողմից խաղաղ ճանապարհով իշխանությունը նվաճելու կուրսից։

ՌՍԴԲԿ(բ) Կովկասյան կազմակերպությունների երկրային համագումարը Ստ. Շահումյանի գլխավորությամբ հակահարված տալով նրանց օպորտունիստական հայացքներին ու տրամադրություններին, ընթացիկ մոմենտի մասին ընդունում է կուսակցության VI համագումարի որոշումներից, Կենտրոնական կոմիտեի և Վ. Ի. Լենինի դիրեկտիվներից ու ցուցումներից բխող բանաձև։ «Կուսակցության Կենտրոնական կոմիտեի հետ լիովին համաձայն,—ասված է բանաձևում,— մենք հեղափոխության հաղթական խնդիրն ենք համարում բանվորների, զինվորների և գյուղացիների դեպուտատների սովետների Համառուսաստանյան համագումարի հրավիրումը, որը պետք է իր ձեռքը վերցնի ամբողջ պետական իշխանությունը... Բանվոր դասակարգը, զինվորները, գյուղացիու-

15 Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, էջ 489, 1948։

16 Ստ. Շահումյան, Հոդվածներ և ճառեր, 1953, էջ 264։

թյան հեղափոխական ներկայացուցիչները չպետք է կանգ առնեն դժվարությունների ու զոհերի առաջ և պետք է համարձակորեն գնան դեպի իշխանության նվաճումը և երկրի ու հեղափոխության փրկումը կործանումից»[17]։

Կովկասում սոցիալիստական հեղափոխության հաղթանակի ապահովման համար հսկայական նշանակություն ուներ ազգային հարցի ճիշտ լուծումը։ Եվ պատահական չէ, որ ազգային հարցի քննարկումը կարևոր տեղ գրավեց ՌՍԴԲԿ(բ) Կովկասյան կազմակերպությունների երկրային առաջին համագումարում։ «Կովկասում հեղափոխության ամենաուխերիմ թշնամին,— գրել է Ստ. Շահումյանը,— միշտ եղել է և մնում է նացիոնալիզմը», որը «մահացու հարված հասցրեց 1905 թվականի հեղափոխությանը Կովկասում։ Նույն նացիոնալիզմը չար կատակ է անում կովկասյան ժողովրդի հետ և այժմ, 1917 թ. հեղափոխությունում»[18]։

Փետրվարյան հեղափոխությունից հետո Անդրկովկասում, ինչպես և Ռուսաստանի մյուս ազգային ծայրամասերում ու շրջաններում բուրժուազիան օգտվելով աշխատավոր զանգվածների հեղափոխական անբավարար գիտակցությունից, ազգային արդյունաբերական պրոլետարիատի սակավությունից ու թույլ կազմակերպվածությունից, քողարկվելով «ազգային ազատության» գրոշով և իր դասակարգային շահերից մեկնաբանելով ազգային ինքնորոշման իրավունքը, ձգտում էր իշխանությունը վերցնել իր ձեռքը։ Իրենց քաղաքական լակեյների՝ դաշնակների, մուսավաթականների, վրացական մենշևիկների և սոցիալ-ֆեդերալիստների օգնությամբ Անդրկովկասի բուրժուա-կալվածատիրական դասակարգերը ամեն կերպ աշխատում էին երկրամասի բազմազգ զանգվածների գիտակցությունը թունավորել նացիոնալ-շովինիզմի գաղափարներով, նրանց մեջ սերմանել անվստահություն, թշնամություն և ատելություն, և դրանով իսկ արգելել ու խանգարել նրանց դասակարգային ինտերնացիոնալ համախմբմանը և հեղափոխական պայքարին։

Ապրիլյան կոնֆերանսի որոշումները ազգային հարցի մասին հսկայական նշանակություն ունեցան Ռուսաստանի ազգային ծայրամասերի ու շրջանների բոլշևիկյան կազմակերպությունների համար։ Անդրկովկասի կոմունիստները խոշոր աշխատանք կատարեցին աշխատավոր զանգվածների ինտերնացիոնալ դաստիարակության և բուրժուական նացիոնալիստների մերկացման ուղղությամբ։ Ստեղծագործաբար կիրառելով կոմունիստական կուսակցության լենինյան ազգային ծրագրի դրույթները, Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունները երկրամասում ստեղծված ազգային բարդ հարաբերությունների պայմաններում կարողանում են ճիշտ կողմնորոշվել ազգային հարցում։ «Մնալով ազգային հարցի մասին մեր կուսակցության ծրագրի և Ապրիլյան կոնֆերենցիայի բանաձևին հավատարիմ», ՌՍԴԲԿ(բ) կովկասյան կազմակերպությունների երկրային առաջին համագումարը իր որոշմամբ ամբողջովին պաշտպանում է կուսակցության լենինյան ծրագրային լոզունգը ազգերի ինքնորոշման իրավունքի մասին՝ ընդհուպ մինչև անջատվելը և ինքնուրույն պետություն կազմելը։ Սակայն Անդրկովկասի բոլշևիկները ազգերի ինքնորոշման իրավուն-

---

17 Резолюции Кавказского Краевого съезда РСДРП(б), издание Кавказск. краевкомитета РСДРП(б), стр. 4.

18 Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, 1948, էջ 509։

քի իրականացմանը մոտենում էին պրոլետարիատի, սոցիալիստական հեղափոխության շահերի տեսակետից, այն երբեք չգիտելով ինքնանպատակ մի բան։ Ազգերի ազատ ինքնորոշման իրավունքի հարցը նրանք երբեք չէին նույնացնում այս կամ այն պատմական ժամանակաշրջանում ազգերի պարտադիր անջատման իրավունքի հետ։

Խոշոր նշանակություն ուներ և ագրարային հարցի քննարկումը համագումարում։ Սոցիալիստական հեղափոխության հաղթանակի համար մղվող պայքարում բանվոր դասակարգի մերձավորագույն դաշնակիցը չքավոր գյուղացիությունն էր։ Պրոլետարիատի հաղթանակը մեծ չափով պայմանավորված էր նրանով, թե բանվոր դասակարգին ու նրա կուսակցությանը որքանով կհաջողվի ապահովել չքավոր գյուղացիական զանգվածների մասնակցությունը սոցիալիստական հեղափոխությանը։

Ագրարային հարցն առավել կարևոր նշանակություն ուներ Կովկասում։ Ճորտատիրական հարաբերությունների մնացորդների առկայությունը, հողազրկությունը, կալվածատիրական դաժան շահագործումը, գյուղացիության աշխատավոր զանգվածներին մղում էին դեպի պայքարի հեղափոխական ուղին։

«Հատկապես այստեղ, Անդրկովկասում,— գրել է Ստ. Շահումյանը,— կարելի է տեսնել ոչ միայն ճորտատիրական իրավունքի մնացորդներ, այլև հաճախ ճորտային հարաբերություններ»[19]։

Բանվոր դասակարգի՝ իր բնույթով սոցիալիստական շարժումը միահյուսվում էր գյուղացիական զանգվածների դեմոկրատական շարժման հետ մեկ միասնական հեղափոխական հոսանքի մեջ։

Ղեկավարվելով ՌՍԴԲԿ(բ) Ապրիլյան կոնֆերանսի որոշումներով, Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունները պայքար են ծավալում գյուղի աշխատավոր զանգվածների շրջանում բոլշևիկյան, պրոլետարական ազդեցության տարածման ու ամրապնդման, նրանց դասակարգային գիտակցության բարձրացման, ագրարային հեղափոխական շարժումն ընդլայնելու և խորացնելու ուղղությամբ։

Համագումարում ագրարային հարցի մասին զեկուցումով հանդես է գալիս Ֆ. Մախարաձեն։

Համագումարի ընդունած բանաձևում նշված է, որ ռուսական հեղափոխության հիմնական հարցերից մեկը ագրարային հարցն է, որի լուծումից կախված է ոչ միայն Ռուսաստանի բազմամիլիոն գյուղացիության, այլև հենց իրեն՝ հեղափոխության բախտը։ Բանաձևում մերկացվում է բուրժուական ժամանակավոր կառավարությունը, որը հեղափոխության յոթ ամիսների ընթացքում ոչ միայն ոչ մի քայլ չի արել ագրարային հարցի լուծման համար, այլ ընդհակառակը, ամեն կերպ աշխատել է լրիվ պահպանել ինչպես կալվածատիրական հողատիրությունը, այնպես էլ գյուղում գոյություն ունեցող շահագործողական հարաբերությունները։

«Ելնելով այն դրությունից, որ ագրարային հարցը Ռուսաստանում ընդհանրապես և Կովկասում մասնավորապես չի կարող լուծվել առանց ամբողջ իշխանությունը բանվորների, զինվորների ու գյուղացիների դեպուտատների սովետների ձեռքն անցնելու և հենվելով այդ հարցի մասին ՌՍԴԲԿ (բոլշևիկների) 1917 թ. ապրիլին կայացած համառուսական կոնֆերենցիայի որոշում-

19 Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, էջ 529։

ների վրա, ՌՍԴԲԿ(բոլշևիկների) Կովկասյան երկրային առաջին համագումարը որոշում է.

1. Պրոլետարիատի կուսակցությունը պահանջում է պետության մեջ բոլոր հողերի ազգայնացում, այսինքն՝ նրանց անցումը ամբողջ ժողովրդի ձեռքը։

2. Կուսակցությունը կանգնած է անհապաղ, մինչև Սահմանադիր ժողովի հրավիրումը բոլոր կալվածատիրական հողերի, այդ թվում կաբինետային, բաժնեկալվածային, խանական, բեգական, աղալարական և այլն, ինչպես նաև վանքապատկան, եկեղեցապատկան, վակուֆային հողերի՝ գյուղացիական դեպուտատների Սովետների կամ գյուղացիական կոմիտեների կողմից կազմակերպված գրավման կողմը, որոնց և անցնում է այդ բոլոր հողերի բաժանման իրավունքը»[20]։

Երկրային համագումարը խոշոր ուշադրություն նվիրեց կովկասյան բանակում տարվող բոլշևիկյան աշխատանքի ուժեղացման հարցերին։ Պատրաստվելով ցինված ապստամբության, բոլշևիկների կուսակցությունը հսկայական նշանակություն էր տալիս զինվորական զանգվածների նվաճմանը և սոցիալիստական հեղափոխության զինված ուժերի ստեղծմանը։ Հաշվի առնելով 1905—1907 թթ. ռուսական առաջին հեղափոխության փորձը և ղեկավարվելով կուսակցության Կենտրոնական կոմիտեի ու Վ. Ի. Լենինի ցուցումներով, Կովկասի բոլշևիկյան կազմակերպությունները ագիտացիոն-պրոպագանդիստական և կազմակերպական խոշոր աշխատանք էին կատարում կովկասյան բանակի զինվորների շրջանում, քայլ առ քայլ ազատագրելով նրանց համաձայնողական տրամադրություններից, էսեռա-մենշևիկյան ազդեցությունից։

ՌՍԴԲԿ(բ) Կովկասյան կազմակերպությունների երկրային համագումարում հանդես գալով բանակում Սահմանադիր ժողովի ընտրությունների նախապատրաստման մասին զեկուցումով, Գ. Կորզանովը նշեց, որ «Զինվորների տրամադրության մեջ կատարվում է սոցիալ-դեմոկրատ բոլշևիկների համար նպաստավոր ուժեղ բեկում. զինվորական զանգվածներն սկսում են իրենց մեջ վերացնել սոցիալիստ-հեղափոխականների և մենշևիկների համաձայնողական տակտիկայի պատրանքները, զինվորները հեռանում են նրանց կուսակցությունների շարքերից, հեղափոխական տրամադրություններն ուժեղանում են, մասսաները տարերայնորեն գալիս են դեպի սոցիալ-դեմոկրատ բոլշևիկների հեղափոխական տակտիկան, առաջադրում և պաշտպանում են նրանց լոզունգներն ու պահանջները»[21]։

Համագումարը որոշում է ընդունում հոկտեմբերի 22-ին հրավիրել բոլշևիկյան զինվորական կազմակերպությունների Կովկասյան երկրային համագումար[22]։

ՌՍԴԲԿ(բ) Կովկասյան կազմակերպությունների երկրային առաջին համագումարի հրավիրումը զուգադիպեց այն բուռն քաղաքական պայքարին, որը մղվում էր Սահմանադիր ժողովի գումարման շուրջը։ Ահա թե ինչու համագումարը սոցիալիստական հեղափոխության կարևորագույն հարցերի հետ միա-

20 Резолюции Кавказск. краев. съезда РСДРП(б), стр. 9.

21 «Կավկազսկի ռաբոչիյ», № 169, 1917։

22 Համագումարի փոխարեն հոկտեմբերի 22-ին Թիֆլիսում բացվում է կովկասյան բանակի բոլշևիկյան կազմակերպությունների կոնֆերանսը, քանի որ բանակի հակահեղափոխական հրամանատարության, էսեռների ու մենշևիկների հալածանքների ու հետապնդումների հետևանքով պատգամավորների մի զգալի մասը հնարավորություն չէր ունեցել գալու համագումար։

սին քննարկեց նաև երկրամասի բոլշևիկյան կազմակերպությունների խնդիրները՝ կապված Սահմանադիր ժողովի ընտրությունների հետ։ Ինչպես Սահմանադիր ժողովի ընտրությունների նախապատրաստման մասին համագումարում զեկուցումով հանդես եկած Դ. Շահվերդյանը, այնպես էլ այդ հարցի քննարկմանը մասնակցած պատգամավորներ Արվելաձեն, Մռավյանը, Լեժավան, Ստուրուան, Միկոյանը, Շահումյանը նշում են Սահմանադիր ժողովի ընտրական կամպանիայի ժամանակ զանգվածների շրջանում հեղափոխական աշխատանքը ուժեղացնելու, նրանց բոլշևիկյան կուսակցության լոզունգների շուրջը կազմակերպելու և համախմբելու անհրաժեշտությունը։ Խիստ քննադատության ենթարկելով մի քանի պատգամավորների անարխո-սինդիկալիստական սխալը, որն արտահայտվում էր Սահմանադիր ժողովի ընտրությունները բոլշևիկների մասնակցության անհրաժեշտության և աշխատավոր գյուղացիության հեղափոխական դերի ժխտման մեջ, Ա. Ի. Միկոյանն իր ելույթում ասում է. «Սահմանադիր ժողովին ոչ մի նշանակություն չտալ կարող է անարխո-սինդիկալիստը, բայց ոչ մարքսիստը։ Մենք պառլամենտարիզմի կույր երկրպագուներ չենք։ Դիմելով հեղափոխական մասսայական գործողությունների, մենք չենք հրաժարվում պառլամենտը՝ որպես պրոլետարիատի պայքարի միջոց օգտագործելուց... Հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան պատրաստելով և կազմակերպելով մասսաներին հեղափոխական գործողությունների համար, միաժամանակ պետք է ակտիվ մասնակցություն ունենա ընտրություններին և ձգտի անցկացնել ավելի շատ դեպուտատներ»[23]։ Սահմանադիր ժողովի ընտրությունների նախապատրաստման հարցի վերաբերյալ բանաձև կազմելու համար համագումարը ընտրում է հանձնաժողով, որի կազմի մեջ մտան Ստ. Շահումյանը, Դ. Շահվերդյանը, Գ. Կորզանովը և Սամարսկին։ Սահմանադիր ժողովի մասին ընդունած բանաձևում ասված է. «Համագումարը կոչ է անում բոլոր կազմակերպություններին ամենաեռանդուն աշխատանք տանել Սահմանադիր ժողովի ընտրությունների կապակցությամբ, լայնորեն պարզաբանելով մեր հեղափոխական ծրագիրը և աշխատելով մեր ցուցակի շուրջը հավաքել հնարավորին չափ շատ ընտրողներ»[24]։

Համագումարը կարևոր որոշում ընդունեց կազմակերպական հարցերի վերաբերյալ։ Այդ որոշման մեջ նշված է, որ Կովկասի բոլշևիկյան կազմակերպությունները միավորվում են մեկ՝ երկրամասային կազմակերպության մեջ, կազմում Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական (բոլշևիկների) կուսակցության անբաժանելի մասը և ղեկավարվում նրա Կենտրոնական կոմիտեի կողմից։ «Երկրային կոմիտեն հանդիսանում է կուսակցության Կովկասյան կազմակերպությունների միավորող և ղեկավար կենտրոնը, նրանց ներկայացնում է ուրիշ կուսակցությունների ու հիմնարկությունների հետ ունեցած հարաբերություններում, նշանակում է երկրամասային կոմիտեի օրգանների խմբագրությունները, կազմակերպում է կուսակցական հիմնարկություններ, տնօրինում է երկրամասային կուսակցական դանձարկղը, տեղաբաշխում է երկրամասային կազմակերպության ուժերն ու միջոցները»[25]։

---

23 «Կավկազսկի ռաբոչի», № 170, 1917։

24 Резолюции Кавказск. краев. съезда РСДРП(б), стр. 4.

25 Резолюции Кавказск. краев. съезда РСДРП(б), стр. 11.

ՌՍԴԲԿ(բ) Կովկասյան կազմակերպությունների երկրային առաջին համագումարը կարևոր նշանակություն ունեցավ երկրամասում ամբողջովին ինքնուրույն բոլշևիկյան կազմակերպությունների ձևավորման համար։

Չնայած Փետրվարյան հեղափոխությունից հետո ստեղծված բարդ իրադրության մեջ Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունները հիմնականում ճիշտ կողմնորոշվեցին հեղափոխության կարևոր հարցերում, այնուամենայնիվ մինչև Վ. Ի. Լենինի Ապրիլյան թեզիսները և կուսակցության Ապրիլյան կոնֆերանսի որոշումները, նրանց տակտիկան մի քանի սկզբունքային հարցերում տառապում էր անհետևողականությամբ։ Դրանով պետք է բացատրել, որ Անդրկովկասի բոլշևիկյան շատ կազմակերպություններ փետրվարյան հեղափոխությունից հետո դուրս գալով ընդհատակից, չնայած կուսակցության կողմից արված նախազգուշացումներին, համաձայնվեցին մենշևիկների հետ մտնել միասնական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների մեջ։

Սակայն չնայած բոլշևիկները մենշևիկների հետ մտան մեկ ընդհանուր սոցիալ-դեմոկրատական կազմակերպության մեջ, նրանք պահպանեցին իրենց քաղաքական ինքնուրույնությունը, տպագիր օրգանները, պրոպագանդիստների և ագիտատորների կոլեկտիվները, առանձին ժողովներ հրավիրելու, գրականություն հրատարակելու իրավունքը և այլն։ Այդ միավորումը անցման մի կարճ էտապ էր դեպի Անդրկովկասի ինքնուրույն բոլշևիկյան կազմակերպությունների ոչ միայն գաղափարական, այլ նաև վերջնական կազմակերպչական ձևավորման ճանապարհին։ Այնուամենայնիվ միավորման փաստը չէր կարող մի որոշ ժամանակ բացասական ազդեցություն չթողնել մենշևիկների համաձայնողական քաղաքականության մերկացման և նրանց ազդեցությունից աշխատավոր զանգվածների ազատագրման վրա։

Կուսակցության Ապրիլյան կոնֆերանսից հետո Անդրկովկասի բոլշևիկյան շատ կազմակերպություններ՝ Բաքվի, Թիֆլիսի, Ալեքսանդրապոլի և մյուսների, վերջնականապես կազմակերպչորեն խզվեցին մենշևիկներից։

Մենշևիկների մարզային համագումարը ցանկանալով տարրալուծում և շփոթություն առաջացնել սոցիալիստական հեղափոխությանը պատրաստվող բոլշևիկյան կազմակերպությունների շարքերում, երկերեսանի առաջարկություն մտցրեց ՌՍԴԲԿ(բ) Կովկասյան համագումար մենշևիկների ու բոլշևիկների կազմակերպական վերամիավորման մասին։ Այդ հարցի կապակցությամբ համագումարում զեկուցեց Քավթառաձեն։ Համագումարը մերժում է բուրժուազիայի հավատարիմ սպասարկուների՝ մենշևիկյան սոցիալ-դավաճանների այդ առաջարկությունը, և խստիվ պահանջում է, որպեսզի մի շարք տեղերում դեռևս մենշևիկների հետ մեկ կազմակերպության մեջ գտնվող բոլշևիկները անհապաղ ու անվերապահորեն սահմանազատվեն նրանցից, ձևավորելով լիակատար ինքնուրույն բոլշևիկյան կազմակերպություններ։ Այդ հարցի մասին համագումարի ընդունած բանաձևում նշված է, որ «Մենշևիկների անդրկովկասյան կազմակերպությունը հանդիսանում է կեղծ կերպով իրեն ս.-դ. բանվորական պարտիա անվանող մանրբուրժուական դեմոկրատների պաշտպանողական կուսակցության մի մասը։ Լիբերների, Դանների, Ծերեթելիների ու Կ° կուսակցությունը ընդհանուր ոչինչ չունի պրոլետարիատի հետ։ Պրոլետարական, զինվորական, իսկ վերջին շրջանում նաև գյուղացիական

զանգվածը արդեն պատռել է բուրժուական համաձայնողական քաղաքականության քողը և շուռ է եկել պաշտպանողականների առաջնորդներից ու կուսակցություններից։ Ոչ մի վստահություն պաշտպանողականներին՝ ահա հեղափոխական բանվորների, զինվորների ու գյուղացիների լոզունգը։ Մենշևիկների կուսակցությունը իրենից ներկայացնում է հեղափոխության ընթացքով հակահեղափոխական բուրժուազիայի կողմը շպրտված սնանկացած առաջնորդների կազմակերպություն... Այդ պատճառով էլ ՌՍԴԲԿ (բոլշևիկների) Կովկասյան երկրային համագումարը մենշևիկների անդրկովկասյան մարզային համագումարի առաջարկությանը՝ միավորման մասին, պատասխանում է կտրական մերժումով»[26]։ Երկրային համագումարի այս որոշումը կարևոր դեր խաղաց սոցիալիստական հեղափոխության թշնամիների՝ մենշևիկների դեմ Կովկասի բոլշևիկյան կազմակերպությունների մղած պայքարում։

Համագումարն ընտրում է Կովկասի բոլշևիկների ղեկավար օրգան՝ ՌՍԴԲԿ(բ) երկրային կոմիտե, որը հետագայում խոշոր գեր կատարեց երկրամասի բոլշևիկյան կազմակերպությունների համախմբման, ամրապնդման, սոցիալիստական հեղափոխության համար նրանց պայքարի կազմակերպման և ղեկավարման գործում։ Երկրային կոմիտեի կազմում ընտրվում են Ստ. Շահումյանը, Մ. Ցխակայան, Ա. Ջափարիձեն, Դ. Կորգանովը, Ի. Ֆիոլետովը և մյուսները։ Կովկասի բոլշևիկների երկրային առաջին համագումարը սրտագին ողջույն է հղում հեղափոխության հանճարեղ առաջնորդ Վ. Ի. Լենինին։ «Սոցիալ-դեմոկրատ բոլշևիկների Կովկասի կազմակերպության առաջին համագումարը,— ասվում էր այդ ողջույնում,— ավարտելով իր աշխատանքը, ջերմ ողջույն է հղում ռուսական հեղափոխության փառապանծ առաջնորդին, 3-րդ ինտերնացիոնալի լավագույն ներկայացուցչին, համաշխարհային պրոլետարական հեղափոխության ամենաեռանդուն մարտիկին՝ ընկեր Լենինին։ Համագումարը միաժամանակ իր զայրույթն է արտահայտում Կերենսկու կողմից գլխավորվող, իրեն սրբապղծաբար «հեղափոխական կառավարություն» կոչող ժամանակավոր կառավարության դեմ, որն իրեն թույլ է տվել այնպիսի նողկալի զրպարտություն և հալածանք Պետերբուրգի հեղափոխական պրոլետարիատի և նրա առաջնորդների նկատմամբ, ինչպիսին թույլ չէր տալիս իրեն ցարական կառավարությունը...

Համագումարը հաստատ համոզմունք է հայտնում, որ մոտ ապագայում Ռուսաստանի բանվոր դասակարգը և հեղափոխական գյուղացիությունը իրենց նոր հեղափոխության միջոցով կթոթափեն միլյուկովների ու նրանց լակեյներ կերենսկիների լուծը ու հնարավորություն կստեղծեն նաև ընկեր Լենինի համար դուրս գալու ընդհատակից ու բացահայտորեն գրավելու մեր կուսակցության առաջնորդի, ռուսական մեծ հեղափոխության առաջնորդի իր պոստը»[27]։ ՌՍԴԲԿ(բ) Կովկասյան կազմակերպությունների երկրային առաջին համագումարը կարևոր տեղ է գրավում Կովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության մեջ։ Այն հսկայական նշանակություն ունեցավ Կովկասի բոլշևիկյան կազմակերպությունների քաղաքական-կազմակերպչական ամրապնդման համար։ Կովկասի բոլշևիկների առաջին համագումարը վառ կերպով ցույց տվեց, որ երկրամասի բոլշևիկյան կազմակերպությունները սերտորեն համա-

[26] Резолюции Кавказск. краев. съезда РСДРП(б), стр. 14—15.
[27] Резолюции Кавказск. краев. съезда РСДРП(б), стр. 16.

խմբված են կոմունիստական կուսակցության և նրա լենինյան Կենտրոնական կոմիտեի շուրջը։ Համագումարի արդյունքների մասին ՌՍԴԲԿ(բ) Կովկասյան երկրային կոմիտեն հաղորդում է կուսակցության Կենտրոնական կոմիտեին։ Կենտկոմին ուղղված նամակի մեջ ասված է. «Հարգելի ընկերներ. Հոկտեմբերի առաջին օրերին տեղի ունեցավ մեր կուսակցության կովկասյան կազմակերպությունների համագումարը, որի շնորհիվ այդ բոլոր կազմակերպությունները միավորվեցին կովկասյան երկրամասային մեկ կազմակերպության մեջ, որի համագումարում ընտրված միավորող և ղեկավար կենտրոնը՝ Կովկասյան երկրային կոմիտեն արդեն անցել է աշխատանքի...»[28]։ Իր պատասխան նամակով կուսակցության Կենտրոնական կոմիտեն, ողջունելով Կովկասյան երկրային կոմիտեին, գրում է. «Ողջունում ենք Կովկասյան երկրամասային կոմիտեին և հղում ենք հեղափոխության բացառիկ կարևոր այս մոմենտին կուսակցության միավորման և շինարարության լավագույն ցանկություններ»[29]։ Սոցիալիստական հեղափոխության հաղթանակի համար Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների ամբողջ պայքարը անմիջականորեն ղեկավարում էր բոլշևիկների կուսակցության Կենտրոնական կոմիտեն, որը ուշադիր հետևում էր բոլշևիկյան կազմակերպությունների գործունեությանը, ղեկավար ցուցումներ տալիս, ժամանակին կանխում երկրամասում ստեղծված բարդ իրադրության մեջ թույլ տված նրանց առանձին սխալները, ոգևորում նրանց սոցիալիստական հեղափոխության համար մղվող պայքարում։

---

28 ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 17, գ. 355, թ. 5—6։

29 ՄԼԻ-ի կուսարխիվ, ֆ. 17, գ. 79, թ. 109։